ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **14/10/2022**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/2
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 24 անդամներ:

Բացակա էին՝ Նազիկ Հարությունյանը, Արման Մեղրյանը, Նորայր Միքայելյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Աննա Չոբանյանը, Եղիշե Ավետիսյանը, Անուշ Ծատուրյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 14-ի երրորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստի հետևյալ օրակարգը.
1) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 27-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
2) Աբովյան համայնքի 2022 թվականի բյուջեի ինն ամսվա եկամուտների և ծախսերի կատարողականի մասին.
3) Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Լուսավորության համակարգի կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին.
4) Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից սուբվենցիա

ստանալու նպատակով «Համայնքային փողոցների ասֆալտապատում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին.
5) Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Աստիճանների հիմնանորոգում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին.
6) Կարեն Թադևոսյանին պատկանող 0.05 հեկտար հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
7) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0103-0066 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
8) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Հանրապետության պողոտայի 7-րդ շենքի թիվ 42 բնակարանն անհատույց օտարելու մասին.
9) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 3 շենքի թիվ 2/2 բնակարանն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
10) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին.
11) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինություններն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
12) Աբովյան համայնքի ավագանու անդամ Էմիլ Հարությունյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.
13) Աբովյան համայնքի ավագանու անդամ Նազիկ Հարությունյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.
14) Աբովյան համայնքի ավագանու անդամ Նորայր Միքայելյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.
15) Աբովյան համայնքի ավագանու անդամ Վլադիմիր Առաքելյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.
16) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 127-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 27-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին

որոշում է՝

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 27-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի «3 150 000.0» թիվը փոխարինել «3 833 082.0» թվով:

2. Որոշմամբ հաստատված N 2, N 3, N 4 և N 7 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1-N 4 հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամ Տ. Գեղամյանը հարց բարձրացրեց նախորդ նիստում քննարկված մարդատար ավտոմեքենաները աճուրդի հանելու գործընթացի մասին և առաջարկեց կոնկրետ գործողություններ կատարելու դեպքում տեղյակ պահել:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 128-Ն /

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄՍՎԱ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, Աբովյան համայնքի ավագանին

որոշում է՝

1. Ի գիտություն ընդունել Աբովյան համայնքի 2022 թվականի բյուջեի ինն ամսվա եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 129-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԾԱՏՈՒՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Լուսավորության համակարգի կառուցում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 130-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԾԱՏՈՒՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Համայնքային փողոցների ասֆալտապատում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 131-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԾԱՏՈՒՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2023 թվականի

պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Աստիճանների հիմնանորոգում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 132-Ա/

Լսեցին
ԿԱՐԵՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 0.05 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14[3]-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի, հաշվի առնելով Կարեն Թադևոսյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի հունիսի 17-ի N Ք-2813) և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 19-ի N 1/փ-200 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Կարեն Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի հունիսի 14-ի N 14062022-07-0051 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 07-013-0140-0046) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 0.3382 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (վարելահող) հողամասից 0.05 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամաս (համաձայն հատակագծի):
2. Կարեն Թադևոսյանը պարտավոր է 0.05 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին մուծել հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 1 443 750 (մեկ միլիոն չորս հարյուր քառասուներեք հազար յոթ հարյուր հիսուն) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Թադևոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 133-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-043-0103-0066 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի, հաշվի առնելով Գուրգեն Մարգարյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի սեպտեմբերի 16-ի N Ք-4682) և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 30-ի N 132 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Փոփոխել Գուրգեն Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2021 թվականի սեպտեմբերի 30-ի N 30092021-07-0058 վկայական) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0103-0066 կադաստրային ծածկագրով 0.06751 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի (այլ հողատեսք) նպատակային նշանակությունը որպես բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամաս:
2. Գուրգեն Մարգարյանը պարտավոր է 0.06751 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին մուծել հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 1 949 352 (մեկ միլիոն ինը հարյուր քառասունինը հազար երեք հարյուր հիսուներկու) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գուրգեն Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 134-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ 7-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 42 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 20-ի N 451 որոշման, հաշվի առնելով Մելանյա Մարտիրոսյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի օգոստոսի 31-ի N Ք-4371), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի օգոստոսի 4-ի N 04082021-07-0152 վկայական) Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 7-րդ շենքի 14.3 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 42 բնակարանն անհատույց օտարել Մելանյա, Նարինե և Վարդան Մարտիրոսյաններին:
2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 135-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ 3-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 2/2 ԲՆԱԿԱՐԱՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 26-Ն որոշման, հաշվի առնելով «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ «321Ե-01/Վ-022» գնահատման հաշվետվությունը, որով անշարժ գույքը գնահատվել է 448 000 (չորս հարյուր քառասունութ հազար) դրամ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Անի Համբարձումյանը բնակվում է Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 3-րդ շենքի թիվ 2/2 բնակարանում, հիմք ընդունելով Անի Համբարձումյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի օգոստոսի 16-ի N Ք-4024), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2019 թվականի դեկտեմբերի

23-ի N 23122019-07-0086 վկայական) Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 3-րդ շենքի 44.78 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 2/2 բնակարանն ուղղակի վաճառքով՝ 448 000 (չորս հարյուր քառասունութ հազար) դրամով օտարել Անի Համբարձումյանին:
2. Անի Համբարձումյանը պարտավոր է վճարել.
1) համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին 448 000 (չորս հարյուր քառասունութ հազար) դրամ՝ բնակարանի գինը.
2) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին 73 000 (յոթանասուներեք հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար:
3. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Անի Համբարձումյանի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անի Համբարձումյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 136-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. 2022 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Նշվեց, որ նախագծով ներկայացված հավելվածի 5-րդ և 7-րդ տողերում ընդգրկված հողամասերի վերաբերյալ քննարկում է տեղի ունեցել նաև իրավասու մշտական հանձնաժողովի նիստում և առաջարկվել է ցանկում կատարել փոփոխություններ:

Առաջարկվեց հավելվածի 5-րդ և 7-րդ տողերը հանել ցանկից և հավելվածը հաստատել առանց այդ տողերի:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 137-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***՝

1. 2022 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել իրավահարաբերության պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշման համաձայն համայնքային սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացված ինքնակամ կառուցված հասարակական նշանակության կառույցները՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Աբովյան համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Աբովյան համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:
3. Ինքնակամ շինությունները կառուցած անձանց կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Առաջարկվեց հավելվածի 1-ին տողը հանել ցանկից և հավելվածը հաստատել առանց այդ տողի:
Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 138-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԷՄԻԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 70-րդ հոդվածի 2-րդ մասի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագանու անդամ Էմիլ Հարությունյանը 2022 թվականի երկրորդ նստաշրջանի ընթացքում տեղի ունեցած ավագանու 6 նիստերից, 86 քվեարկություններից բացակայել է 5 նիստերից, 78 քվեարկություններից, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Վաղաժամկետ դադարեցնել Աբովյան համայնքի ավագանու անդամ Էմիլ Հարությունյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ – 0 Դեմ – 23 Ձեռնպահ – 0 չի քվեարկել 1

Որոշումը չի ընդունվել

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՆԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 70-րդ հոդվածի 2-րդ մասի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագանու անդամ Նազիկ Հարությունյանը 2022 թվականի երկրորդ նստաշրջանի ընթացքում տեղի ունեցած ավագանու 6 նիստերից, 86 քվեարկություններից բացակայել է 6 նիստերից, 86 քվեարկություններից, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Վաղաժամկետ դադարեցնել Աբովյան համայնքի ավագանու անդամ Նազիկ Հարությունյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ – 0 դեմ – 24 ձեռնպահ – 0

Որոշումը չի ընդունվել

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՆՈՐԱՅՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 70-րդ հոդվածի 2-րդ մասի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագանու անդամ Նորայր Միքայելյանը 2022 թվականի երկրորդ նստաշրջանի ընթացքում տեղի ունեցած ավագանու 6 նիստերից, 86 քվեարկություններից բացակայել է 2 նիստերից, 56 քվեարկություններից, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Վաղաժամկետ դադարեցնել Աբովյան համայնքի ավագանու անդամ Նորայր Միքայելյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ – 0 դեմ – 24 ձեռնպահ – 0

Որոշումը չի ընդունվել

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՎԼԱԴԻՄԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 70-րդ հոդվածի 2-րդ մասի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագանու անդամ Վլադիմիր Առաքելյանը 2022 թվականի երկրորդ նստաշրջանի ընթացքում տեղի ունեցած ավագանու 6 նիստերից, 86 քվեարկություններից, մշտական հանձնաժողովի 5 նիստերից բացակայել է 5 նիստերից, 59 քվեարկություններից, մշտական հանձնաժողովի 4 նիստերից, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Վաղաժամկետ դադարեցնել Աբովյան համայնքի ավագանու անդամ Վլադիմիր Արաքելյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ – 0 դեմ – 23 ձեռնպահ – 0 չի քվեարկել 1

Որոշումը չի ընդունվել

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2022 թվականի նոյեմբերի 17-ը՝ ժամը 16:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 139-Ա/

Ավագանու անդամներ

ՎԼԱԴԻՄԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷԴՎԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԷՄԻԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

ՊԱՎԵԼ ՑՈՒԳՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՕՍԻՊՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ